ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ)
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 01-ը նոյտեմբերի 2019թ.
ժամը՝ 11:00

Ծանոթություն՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԱՊՁԲ-9/15 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման օրն, ընթացակարգի հրավերով նախատեսված էր 2019թ հոկտեմբերի 18-ին, սակայն 17.10.2018թ.-ին «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգը բողոքարկվեց և հայտրի բացումն իրականացվեց ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդի կողմից կայացված որոշման (ԳԲՔԱ-ՆԳ-2019/74) հրապարակման հաջորդող օրը:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ. Անտոնյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան,

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

Բացակայում էր գնահատող հանձնաժողովի նախագահ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ Ա. Նազարյանը, իսկ նիստը նախագահում էր հանձնաժողովի անդամ՝ **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյանը:**

01.11.2019թ., ժամը 11:30-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «**Բժշկական սարքերի**» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանում
1.	«Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ
2.	«Գլոբմեդ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Մաղաքյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Մաղաքյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Գնան առարկայի անվանումը	Չ/մ	Քանակ	Նախահաշվային գին ՀՀ դրամ	Մասնակիցներ	Առանց ԱԱՀ	ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Ուլտրաձայնային /անդրաձայնային/ թվային ամրակայված էխոգրաֆ /սոնոգրաֆ/ (համալրված 2 տվիչներով)	հատ	1	5,800,000.00	«Գլոբմեդ» ՍՊԸ	5,630,000.00	0	5,630,000.00
2	Հոլտեր մոնիտոր գրանցող սարք /ծրագրային ապահովմամբ/	հատ	3	8,250,000.00	**Գնային առաջարկի բացակայություն**			
3	Պուլսօքսիմետր մատի վրա տեղադրվող	հատ	16	576,000.00	«Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ	296,000.00	0	296,000.00
4	Թթվածնային կոնցենտրատոր	հատ	8	2,360,000.00	«Գլոբմեդ» ՍՊԸ	2,160,000.00	0	2,160,000.00

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ ՀՀ ՊՆ կարիքների համար **«Բժշկական սարքերի»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով ընթացակարգի, 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ընթացակարգի հրավերի 7.6 և 7.7 կետերի պահանջները, գնահատող հանձնաժողովը **01.11.2019թ.**-ին որոշեց կասեցնել հայտերի բացման նիստը և գների նվազեցման նպատակով **06.11.2019թ. ժամը 10:30-ին** ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) բավարար գնահատված և տվյալ չափաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների («Գլոբմեդ» և «Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ-ների) հետ կազմակերպել միաժամանակյա բանակցություններ և նիստը շարունակել այդ օրը:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը նշված մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցեց նշված բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

06.11.2019թ., ժամը 10:30-ի կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցություններին մասնակցելու համար ծանուցված մասնակիցներից ներկայացել էր «Գլոբմեդ» ՍՊԸ ՍՊԸ-ի տնօրենի կողմից լիազորված անձը, ով էլ չհամաձայնվեց 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով հայտով առաջարկված գները նվազեցնել, ուստի դրանք մնացին առանց փոփոխության, «Մարգ-Ֆարմացիա» ՍՊԸ-ի տնօրենի կողմից հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին ստացվել էր գրություն այն մասին, որ 3-րդ չափաբաժնի մասով իրենց կողմից առաջարկված գինը վերջնական է և ենթակա չէ փոփոխության:

3.4 Ըստ ներկայացված տվյալների մասնակիցները ԱԱՀ վճարող չեն:

3.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ 2-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ (ոչ մի հայտ չի ներկայացվել):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Մաղաքյան)

4.1 06 .11.2019թ (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին և 4-րդ չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց **«Գլոբմեդ» ՍՊԸ -ն**, իսկ 3-րդ չափաբաժնի մասով՝ «Մարգ-**Ֆարմացիա» ՍՊԸ -ն:**

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Մաղաքյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/15» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Նազարյան
Գնահատող	Վ. Վահանյան
Գնահատող	Գ. Անտոնյան
Գնահատող	Հ. Ավետիսյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Մաղաքյան